զամս 16 անցոյց 'ի վտարանդութեան , ամք կենացն 70։

Այս զամանէ թէ առանձին խորհրդով կարգեաց 'ի մի մատեան զայն ընթերցուածս քառասնորդաց պահոց , ըստ կարգի աւանդութեան Ս · Յակոբայ եղբօր Տեառն առաջին Եպիսկոպոսին Երուսաղէմի։ Գտանի և 'ի ձեռագիրս գրուած ինչ 'ի ձեռ հարց պատասխանի ընծայեալ սմին Կիւրղի , որոյ վերնագիրն է · « Երանելոյն Աթանասի Արքեպիսկոպոսի Աղէքսանդրացւոյ հարցմունք վայելուչք և պատուականք Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետի յաղագըս մակացութեան և հանճարոյ։ Արդ Ս · Կիւրեղ հայրապետ է մին յերկոտասան վարդապետաց եկեղեցւոյ , տիրապէս պարծանք Սիոնի և Աթոռոյն Երուսաղէմի , զորոյ գյիշատակն կատարէ երկիցս 'ի տարւոջ եկեղեցին Հայոց։

Յետ վախճանելոյն Կիւրղի հայրապետին ընտրեցաւ տօնելին Յովհաննէս իբրեւ արժանաւոր ժառանգ աթոռոյ եկեղեցւոյն Երուսաղէմի (390)։ Սա 'ի սկզբան ընտրեաց զկեանս միայնակեցութեան , և ապա կարգեցաւ ընդ երիցունս եկեղեցւոյն Երուսաղէմի 'ի Ս · Կիւրղէ · վաստակակից եղեւ նմին 'ի բաղմադիմի վիշտս վտանգի , կրեաց տառապանս յաւուրս հալածանաց և աքսորանաց Կիւրղի 'ի չարախօսաց բռնացելոց 'ի վերայ աթոռոյն Երուսաղէմի, որպէս և սնոտի բանբասանս յոլովս յուղղափառաց , կակածեալ 'ի վերայ իւրերաց , այլ այն ամենայն խափանեցան յետ ժողովոյն Կոստանդինուպօլսի։

Իսկ ինքն փայլէր բանիւ վարդապետութեան , առաւել զարդարեալ գիտութեամբ և առաքինութեամբ , պերճ յատենախօսութեան և ազդու 'ի քարոզս։ Սակայն անկաւ գժտութիւն 'ի մէջ Յովհաննու և Եպիփանու Կիպրացւոյ , եւ անտի տարածեցաւ յԱղէքսանդրիա առ Թէոփիլոս , և 'ի Կոստանդինուպօլիս առ Յովհաննու Ոսկեբերան։ Քանզի դէպ եղեւ Եպիփանու երթալ յԵրուսաղէմ, և եգիտ զՅովհան ջատագով գրոցն Որոգինեայ · ազդ արար նմա զգոյշ լինել անտի զի նախահայր և ծնող է առէ Արիոսի եւ այլոց ժանտից · այլ ոչ անսաց նմա Յովհաննէս , եւ 'ի կշտամբել Եպիփանու յատենի Եկեղեցւոյ զգիրս մոլորութեան Որոգինեայ , նախատինս վարկաւ զայն ինքեան Յովհաննէս , եւ մեկնեալ անտի Եպիփանու դէպ